ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՎԱԾ ՏՈԿՈՄՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՉԱՓՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գլխավոր տեղեկություն

Համար	N 1321-Ն
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Պաշտոնական Ինկորպորացիա (01.01.2025-մինչ օրս)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	ՀՀՊՏ 2017.11.01/65(1340) Հոդ.1057
Ընդունող մարմին	ՀՀ կառավարություն
Ընդունման ամսաթիվ	05.10.2017
Ստորագրող մարմին	ՀՀ վարչապետ
Ստորագրման ամսաթիվ	23.10.2017
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	01.01.2018

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 հոկտեմբերի 2017 թվականի N 1321-Ն

ՀԻՊՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՎԱԾ ՏՈԿՈՍՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՉԱՓՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(վերնագիրը փոփ. 08.06.18 N 647-Ն)

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 160-րդ հոդվածի 6-րդ մասը և 2021 թվականի նոյեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-360-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

(նախաբանը փոփ. 08.06.18 N 647-Ն, լրաց. 15.04.22 N 509-Ն)

1. Սահմանել հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով ֆիզիկական անձանց կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման կարգը՝ համաձայն հավելվածի:

(1-ին կետը փոփ. 08.06.18 N 647-Ն)

2. Սահմանել, որ հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող (վճարված) տոկոսների գումարների չափով վարձու աշխատողի, անհատ ձեռնարկատիրոջ և նոտարի կողմից 2014, 2015, 2016 և 2017 թվականների հաշվետու եռամսյակների (տարվա) համար վճարված եկամտային հարկի գումարները վերադարձվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի N 205-Ն որոշման համաձայն:

(2-րդ կետը փոփ. 08.06.18 N 647-Ն)

3. ***(կետն ուժը կորցրել է 24.09.21 N 1578-Ն)***

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Կ. Կարապետյան**

2017 թ. հոկտեմբերի 23
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
հոկտեմբերի 5-ի N 1321-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԻՊՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՎԱԾ ՏՈԿՈՍՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՉԱՓՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ
(վերնագիրը փոփ. 08.06.18 N 647-Ն)

1. Սույն կարգով կարգավորվում են, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 160-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից ստացված և փաստացի բնակարանի կամ անհատական բնակելի տան ձեռքբերմանը կամ անհատական բնակելի տան կառուցմանն ուղղված հիփոթեքային վարկի (այսուհետ՝ հիփոթեքային վարկ) սպասարկման համար վճարվող տոկոսների (այսուհետ՝ տոկոս) գումարների չափով ֆիզիկական անձանց (բացառությամբ վարձու աշխատող չհամարվող անհատ ձեռնարկատիրոջ և նոտարի) օրենքով սահմանված կարգով վճարված (այդ թվում՝ հարկային գործակալի միջոցով գանձված) եկամտային հարկը վերադարձնելու հետ կապված հարաբերությունները:

(1-ին կետը փոփ., լրաց. 08.06.18 N 647-Ն)

2. Սույն կարգի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում անմիջապես կառուցապատողից բնակարան ձեռք բերող, ինչպես նաև պետության և (կամ) համայնքի կողմից իրականացվող բնակարանային ապահովության ծրագրի շրջանակներում պետությունից կամ համայնքից բնակարան (այդ թվում՝ ավտոկայանատեղի, եթե այն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով կցված է բնակարանին) ձեռք բերող, կամ Հայաստանի Հանրապետության տարածքում անմիջապես կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող կառուցապատողից անհատական բնակելի տուն ձեռք բերող, կամ Հայաստանի Հանրապետության տարածքում անհատական բնակելի տուն կառուցող վարձու աշխատողների (այսուհետ՝ վարկառու) վրա՝ վերջիններիս կողմից սույն կարգի 5-րդ կետով սահմանված փաստաթղթերը հարկային մարմին ներկայացվելու դեպքում: Սույն կարգի կիրառման իմաստով, վարկառու է

հանդիսանում նաև վարձու աշխատող հանդիսացող հիփոթեքային վարկի համավարկառուն՝ բնակարանի (անհատական բնակելի տան) սեփականատեր (համասեփականատեր) հանդիսանալու դեպքում:

(2-րդ կետը խմբ. 08.06.18 N 647-Ն, փոփ. 24.09.21 N 1578-Ն, 15.04.22 N 509-Ն)

3. Եթե հաշվետու եռամսյակի ընթացքում վարձու աշխատողին աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները հաշվարկել են միաժամանակ մի քանի գործատուներ, սակայն այդ գործատուներից որևէ մեկը, իսկ հարկային գործակալի պարտավորությունից ազատված գործատուների մոտ աշխատող վարձու աշխատողների դեպքում՝ վարձու աշխատողը հաշվետու եռամսյակի ամիսների համար ներկայացված եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական (պարզեցված) հաշվարկով աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով հայտարարագրված հարկային պարտավորությունները չեն կատարել կամ կատարել են մասնակի, ապա վարկառուին այդ գործատուի հաշվարկած եկամտային հարկը վերադարձվում է սույն կարգին համապատասխան այդ պարտավորությունների ամբողջական կատարումից հետո՝ վարկառուի կողմից սույն կարգի 5-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դիմումը ներկայացվելու դեպքում:

(3-րդ կետը խմբ. 08.06.18 N 647-Ն)

4. Վարձու աշխատողին հաշվետու եռամսյակի որևէ ամսում հաշվարկված աշխատավարձից և դրան հավասարեցված վճարումներից տարբերվող այլ հարկվող եկամուտներ վճարված լինելու դեպքում այդ եկամուտների մասով հաշվարկված և վճարված եկամտային հարկի գումարները վերադարձման ենթակա չեն:

(4-րդ կետը փոփ. 08.06.18 N 647-Ն)

5. Հարկային մարմնի կողմից հիփոթեքային վարկի վճարված տոկոսների չափով առաջին անգամ եկամտային հարկի գումարների վերադարձման նպատակով վարկառուն (վարկառուի մահվան դեպքում՝ ժառանգը՝ եկամտային հարկի գումարները ժառանգության զանգվածի մեջ ներառելու և այն ընդունելու դեպքում (մեկից ավելի ժառանգ ունենալու դեպքում՝ այն ժառանգը, որին բոլոր ժառանգների համաձայնությամբ կփոխանցվի եկամտային հարկի վերադարձից օգտվելու իրավունքը)) հարկային մարմին է ներկայացնում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 160-րդ հոդվածով սահմանված՝ եկամտային հարկի վերադարձից օգտվելու իրավունքի հաստատման հայտ (այսուհետ՝ հայտ)՝ հարկային մարմնի կողմից սահմանված ձևի: Հայտին կից վարկառուի կողմից հարկային մարմին են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը և դրանց լուսապատճենները՝

1) վարկառուի անձը հաստատող փաստաթուղթ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիրը կամ, առկայության դեպքում, նույնականացման քարտը, կամ Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող օտարերկրյա քաղաքացու և քաղաքացիություն չունեցող անձի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունքը հաստատող փաստաթուղթը, կամ փախստականի կարգավիճակ ունեցող անձի՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը.

2) վարկառուի հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը, ՀՎՀՀ-ն (առկայության դեպքում).

3) հիփոթեքային վարկի տրամադրման պայմանագրի բնօրինակ կամ այդ պայմանագրի՝ նոտարական կարգով վավերացված պատճենը, հիփոթեքային վարկի պայմանագրի մարման ժամանակացույցը և հիփոթեքային պայմանագրի շրջանակներում ձեռք բերվող՝ գրավադրված գույքի սեփականության (կամ կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի կամ գույքի կառուցապատման իրավունքի) պետական գրանցման վկայականը, իսկ պետության և (կամ) համայնքի կողմից իրականացվող բնակարանային ապահովության ծրագրի շրջանակներում պետությունից կամ համայնքից բնակարան ձեռք բերող քաղաքացու դեպքում՝ համապատասխան ծրագրով նախատեսված հիփոթեքային վարկի տրամադրման պայմանագրի բնօրինակը կամ այդ պայմանագրի՝ նոտարական կարգով վավերացված պատճենը և համապատասխան գույքային իրավունքի գրանցման վկայականը, եթե ծրագրով կիրառելի է գրանցում.

4) Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքի կամ Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցված կամ կառուցվող անհատական բնակելի տան կառուցապատողի կողմից տրված տեղեկանք բնակարանը կամ անհատական բնակելի տունն անմիջապես կառուցապատողից ձեռք բերված (բերվող) լինելու մասին, կամ վարկառու համարվող անձին տրված՝ անհատական բնակելի տան շինարարության թույլտվություն (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում գործող), իսկ պետության և (կամ) համայնքի կողմից իրականացվող բնակարանային ապահովության ծրագրի շրջանակներում պետությունից կամ համայնքից բնակարան ձեռք բերող քաղաքացու դեպքում՝ համապատասխան պետական (համայնքային) մարմնի կողմից տրված տեղեկանք բնակարանը պետությունից (համայնքից) ձեռք բերված (բերվող) լինելու մասին.

5) Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում բնակարանի առուվաճառքի (այդ թվում՝ նախնական) կամ կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի մասին կամ բնակարանի կառուցապատման իրավունքի ձեռքբերման պայմանագրի բնօրինակ կամ Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցված կամ կառուցվող անհատական բնակելի տան առուվաճառքի կամ կառուցվող անհատական բնակելի տուն գնելու իրավունքի մասին կամ

անհատական բնակելի տան կառուցապատման իրավունքի ձեռքբերման պայմանագիր, իսկ պետության և (կամ) համայնքի կողմից իրականացվող բնակարանային ապահովության ծրագրի շրջանակներում պետությունից կամ համայնքից բնակարան ձեռք բերող քաղաքացու դեպքում՝ համապատասխան ծրագրով նախատեսված պայմանագրի բնօրինակը (առուվաճառքի նախնական պայմանագիր, առուվաճառքի պայմանագիր, կառուցվող շենքից անշարժ գույք գնելու պայմանագիր)։

Բնակարանի կամ անհատական բնակելի տան կառուցապատման իրավունքի ձեռքբերման պայմանագրի հիման վրա բնակարան կամ անհատական բնակելի տուն ձեռք բերելու դեպքում սույն կետով սահմանված հայտը ներկայացվում է 2023 թվականի հունվարի 1-ից։

(5-րդ կետը փոփ., խմբ., լրաց. 08.06.18 N 647-Ն, խմբ. 24.09.21 N 1578-Ն, փոփ., լրաց. 15.04.22 N 509-Ն)

5.1. Հայտը ներկայացնելուն հաջորդող տասնհինգ, իսկ բնակարանի կամ անհատական բնակելի տան կառուցապատման իրավունքի ձեռքբերման պայմանագրի հիման վրա բնակարան կամ անհատական բնակելի տուն ձեռք բերելու դեպքում՝ երեսուն աշխատանքային օրվա ընթացքում հայտը հարկային մարմնի կողմից բավարարվելու դեպքում վարկառուն էլեկտրոնային եղանակով հարկային մարմին է ներկայացնում սույն կարգի 5.2-րդ կետով սահմանված դիմում՝ հարկային մարմնի սահմանած կարգով, իսկ հայտի մերժման դեպքում՝ սույն կետով սահմանված համապատասխան ժամկետում հարկային մարմինը վարկառուին ծանուցում է հայտի մերժման հիմքերի մասին։ Սույն կետի կիրառության իմաստով՝ հայտը մերժվում է, եթե՝

1) ձեռք բերվող բնակարանի կամ անհատական բնակելի տան գործարքի պայմանագրային արժեքը գերազանցում է 55 մլն դրամը.

2) 2018 թվականի հունվարի 1-ից հետո ստացված հիփոթեքային վարկի պայմանագրերի շրջանակներում վարկառու ֆիզիկական անձինք սույն որոշմամբ սահմանված կարգով մեկ անգամ օգտվել են հիփոթեքային վարկի սպասարկման համար վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից վճարված տոկոսների գումարների չափով եկամտային հարկի վերադարձման հնարավորությունից.

2.1) 2022 թվականի հուլիսի 1-ից հետո ստացված հիփոթեքային վարկի մասով կառուցված կամ կառուցվող անշարժ գույքը գտնվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ սահմանված՝ շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) այն գոտում, որում գտնվող գույքերի մասով հիփոթեքային վարկի սպասարկման համար վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից վճարված տոկոսների գումարների չափով եկամտային հարկը Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 160-րդ հոդվածով նախատեսված կարգով վերադարձման ենթակա չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ գույքի շինարարության թույլտվություն տրամադրելու վերաբերյալ որոշումն ընդունվել է մինչև 2022 թվականի հունվարի 1-ը.

2.2) 2027 թվականի հունվարի 1-ից հետո ստացված հիփոթեքային վարկի մասով կառուցված կամ կառուցվող անշարժ գույքը գտնվում է կամ կառուցվում է կամ կառուցվելու է Արագածոտնի, Արարատի, Արմավիրի և Կոտայքի մարզերի վարչական տարածքներում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ցանկում ներառված սահմանամերձ բնակավայրերում գտնվող կամ կառուցվող անշարժ գույքի.

2.3) 2029 թվականի հունվարի 1-ից հետո ստացված հիփոթեքային վարկի մասով կառուցված կամ կառուցվող անշարժ գույքը գտնվում է կամ կառուցվում է կամ կառուցվելու է սույն կետի 2.2-րդ ենթակետում չնշված մարզերի վարչական տարածքներում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ցանկում ներառված սահմանամերձ բնակավայրերում գտնվող կամ կառուցվող անշարժ գույքի.

3) չեն ներկայացվել սույն կարգի 5-րդ կետով նախատեսված փաստաթղթերը։

(5.1-ին կետը լրաց. 24.09.21 N 1578-Ն, լրաց., փոփ. 15.04.22 N 509-Ն, լրաց. 17.10.24 N 1626-Ն)

5.2. Հայտը հարկային մարմնի կողմից բավարարվելու դեպքում հիփոթեքային վարկի վճարված տոկոսների չափով եկամտային հարկի գումարների վերադարձման նպատակով վարկառուն (վարկառուի մահվան դեպքում՝ ժառանգը՝ եկամտային հարկի գումարները ժառանգության զանգվածի մեջ ներառելու և այն ընդունելու դեպքում (մեկից ավելի ժառանգ ունենալու դեպքում՝ այն ժառանգը, որին բոլոր ժառանգների համաձայնությամբ կփոխանցվի եկամտային հարկի վերադարձից օգտվելու իրավունքը)) բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին է ներկայացնում հարկային մարմնի կողմից սահմանված ձևի դիմում՝ եկամտային հարկի վերադարձման համար՝ հարկային մարմնի սահմանած կարգով, որում վարկառուն ներկայացնում է իրեն պատկանող բանկային վավեր հաշվի համար, իսկ վարձու աշխատողի համար գրանցման հայտում և (կամ) եկամտային հարկի հաշվարկում ներառվելիք՝ անձին վերաբերող տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն սահմանված լինելու դեպքում՝ հարկային մարմնի կողմից սահմանված կարգով և ձևաչափով գործատուի կողմից ներկայացվում է հաշվետու եռամսյակի ընթացքում հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների և դրանցից հաշվարկված ու Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարված եկամտային հարկի գումարների վերաբերյալ տեղեկատվություն։

(5.2-րդ կետը լրաց. 24.09.21 N 1578-Ն, 15.04.22 N 509-Ն, փոփ. 20.06.24 N 955-Ն)

5.3. Եկամտային հարկի վերադարձի մասին դիմումի մեջ նշված վարկառուի բանկի հաշվի համարի՝ առնվազն ութօրյա վավերականությունը և վարկառուին պատկանելիությունը, ստուգվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և հարկային մարմնի համատեղ սահմանած կարգին համապատասխան, որի նպատակով վարկառուն դիմումի միջոցով տրամադրում է իր համաձայնությունը՝ բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի միջոցով իր բանկային հաշվի համարի վավերականությունը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ կատարված հարցմամբ ստուգելու համար:

(5.3-րդ կետը լրաց. 24.09.21 N 1578-Ն)

5.4. Հիփոթեքային վարկի վճարված տոկոսների չափով եկամտային հարկի գումարների վերադարձման նպատակով հարկային մարմին է ներկայացվում նաև հարկային մարմնի կողմից սահմանված ձևի տեղեկանք՝ հաշվետու եռամսյակում ըստ վարկի մարման ժամանակացույցի վճարման ենթակա վարկառուի կողմից վճարված տոկոսների (բացառությամբ սուբսիդավորման հաշվին վճարված) գումարների մասին: Սույն կետով սահմանված տեղեկանքը հարկային մարմին է ներկայացվում «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեֆորթինգ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ԱՔՌԱ վարկային բյուրո) միջոցով էլեկտրոնային եղանակով՝ հարկային մարմնի և ԱՔՌԱ վարկային բյուրոյի միջև փոխհամաձայնեցված տեխնոլոգիական մեթոդներով: Սույն կետով սահմանված տեղեկանքը հարկային մարմնին ներկայացնելու նպատակով վարկառուն հիփոթեքային վարկը տրամադրած Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությանը տրամադրում է համաձայնություն:

Ընդ որում, մինչև 2022 թվականի հունվարի 1-ն ընկած հաշվետու եռամսյակների համար դիմում ներկայացնելու դեպքում վարկառուն տեղեկացնում է հիփոթեքային վարկը տրամադրած Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությանը՝ մինչև 2022 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համապատասխան եռամսյակ(ներ)ի համար սույն կետում նշված տեղեկատվությունը ԱՔՌԱ վարկային բյուրոյի միջոցով հարկային մարմնին տրամադրելու անհրաժեշտության վերաբերյալ:

(5.4-րդ կետը լրաց. 24.09.21 N 1578-Ն, 15.04.22 N 509-Ն)

5.5. Սույն կարգի 5.4-րդ կետով սահմանված տեղեկանքում ներառվում են վարկառուի անունը, ազգանունը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը, ՀՎՀՀ-ն (առկայության դեպքում), հիփոթեքային վարկի տրամադրման պայմանագրի համարը և ամսաթիվը (այդ թվում՝ փոփոխության դեպքում), հաշվետու եռամսյակում ըստ վարկի մարման ժամանակացույցի վճարման ենթակա և վճարված տոկոսների գումարները՝ դրամով: Սույն կարգի 5.4-րդ կետով սահմանված տեղեկանքում ներառված տեղեկատվության հավաստիության համար պատասխանատու է հիփոթեքային վարկը տրամադրած Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունը:

(5.5-րդ կետը լրաց. 24.09.21 N 1578-Ն)

6. Հետագա հաշվետու ժամանակահատվածներում վճարված եկամտային հարկի գումարները վերադարձնելու համար վարկառուն բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին է ներկայացնում միայն սույն կարգի 5.2-րդ կետով սահմանված դիմումը, եթե մինչև այդ ներկայացված՝ սույն կարգի 5-րդ կետում նշված փաստաթղթերում առկա տեղեկատվությունը մնացել է անփոփոխ: Վարձու աշխատողի համար գրանցման հայտում և (կամ) եկամտային հարկի հաշվարկում ներառվելիք՝ անձին վերաբերող տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն սահմանված լինելու դեպքում՝ հարկային մարմնի կողմից սահմանված կարգով և ձևաչափով գործատուի կողմից ներկայացվում է եկամտային հարկի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը (նախկինում տրամադրված տեղեկատվության փոփոխության դեպքում՝ ներկայացվում է ճշգրտված տեղեկատվություն):

(6-րդ կետը փոփ. 08.06.18 N 647-Ն, խմբ. 24.09.21 N 1578-Ն, 20.06.24 N 955-Ն)

7. Սույն կարգի 5-րդ կետում նշված փաստաթղթերում առկա տեղեկատվության (բացառությամբ հիփոթեքային վարկի պայմանագրի մարման ժամանակացույցի) փոփոխությունների դեպքում վարկառուն պարտավոր է փոփոխության կատարման ամսվան հաջորդող ամսվա 10-ից ոչ ուշ դրա մասին տեղեկացնել հարկային մարմնին՝ ներկայացնելով փոփոխությունները հավաստող փաստաթղթերը:

(7-րդ կետը փոփ. 24.09.21 N 1578-Ն, լրաց. 20.06.24 N 955-Ն)

8. Եկամտային հարկի վերադարձի մասին դիմումը հարկային մարմնի կողմից մերժվելու դեպքում դիմումը ներկայացնելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում մերժման հիմքերի մասին ծանուցվում է վարկառուին: Եկամտային հարկի վերադարձի մասին դիմումը մերժվում է և (կամ) վարկառուին դիմումը լրացնելու պահին տեղեկացվում է, որ դիմումը հնարավոր չէ հանձնել, եթե՝

1) այն ներկայացնելու պահին հաշվետու եռամսյակի ամիսների համար ներկայացված եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական (պարզեցված) հաշվարկով աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով հայտարարագրված հարկային պարտավորություններն ամբողջությամբ կատարված չեն.

2) չեն ներկայացվել սույն կարգի 5.4-րդ, 6-րդ և 7-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը.

3) վարկառուն տվյալ ժամանակաշրջանում օգտվել է ուսման վարձի փոխհատուցման

նպատակով եկամտային հարկի վերադարձման հնարավորությունից.

4) սույն կարգի 5-րդ կետում նշված փաստաթղթերում առկա տեղեկատվության փոփոխությունների դեպքում առաջանում են սույն կարգի 5.1-ին կետի 1-ին, 2-րդ, 2.1-ին, 2.2-րդ և 2.3-րդ ենթակետերով նշված հանգամանքները.

5) ներկայացվել է ոչ ճշգրիտ բանկային հաշվի համար.

6) դիմումը ներկայացնելու պահի դրությամբ առկա է վարկառուին որևէ հիմքով ավել վերադարձված եկամտային հարկի գումար, որի վերաբերյալ սույն կարգի 13-րդ կետին համապատասխան վարկառուն ծանուցվել է և այդ գումարը՝ հաջորդ հաշվետու եռամսյակների վերադարձման ենթակա եկամտային հարկի գումարներից վերադարձնելու վերաբերյալ չի ստացվել վարկառուի համաձայնությունը։

(8-րդ կետը խմբ. 08.06.18 N 647-Ն, 24.09.21 N 1578-Ն, լրաց., փոփ. 15.04.22 N 509-Ն, փոփ. 17.10.24 N 1626-Ն)

8.1. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ստացված հիփոթեքային վարկերի մասով հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների չափով հիփոթեքային վարկի վարկառուներին վերադարձման ենթակա եկամտային հարկի ընդհանուր գումարը յուրաքանչյուր եռամսյակի համար 1.5 մլն դրամը գերազանցելու դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար վերադարձվում է 1.5 մլն դրամը, իսկ 2025 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ստացված հիփոթեքային վարկերի մասով՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 750 հազար դրամը գերազանցելու դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար վերադարձվում է 750 հազար դրամը։

(8.1-ին կետը լրաց. 08.06.18 N 647-Ն, փոփ. 24.09.21 N 1578-Ն, խմբ. 17.10.24 N 1626-Ն)

8.2. Հաշվետու եռամսյակներում վճարված եկամտային հարկի գումարները վերադարձնելու համար հիփոթեքային վարկի վարկառու ֆիզիկական անձանց կողմից եկամտային հարկի վերադարձի մասին դիմումներ ներկայացվելու դեպքում տվյալ հաշվետու եռամսյակի համար այդ դիմումների հիման վրա վերադարձվող գումարները հաշվարկվում են՝ ըստ դրանց ներկայացման հերթականության։

(8.2-րդ կետը լրաց. 24.09.21 N 1578-Ն)

9. Եկամտային հարկի վերադարձման մերժման հիմքերի բացակայության դեպքում վերադարձվող գումարը վարկառուին փոխանցելու նպատակով հարկային մարմինը դիմումը ներկայացնելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով համապատասխան հանձնարարականի հիման վրա գանձապետարանի միջոցով վերադարձվող գումարը փոխանցում է առևտրային բանկեր՝ վարկառուի բանկային հաշվին։

(9-րդ կետը փոփ. 08.06.18 N 647-Ն, խմբ. 24.09.21 N 1578-Ն)

10. ***(կետն ուժը կորցրել է 24.09.21 N 1578-Ն)***

11. Վերադարձվող գումարը վարկառուին փոխանցելու նպատակով գանձապետարանում բացվում է տարանցիկ հաշիվ։ Հարկային մարմնի կողմից գանձապետարան ներկայացվող վճարման հանձնարարականում նշվում են հետևյալ տվյալները՝

1) վարկառուի անունը, ազգանունը.

2) վարկառուի հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը, ՀՎՀՀ-ն (առկայության դեպքում) կամ անձը հաստատող փաստաթղթի համարը/սերիան.

3) ***(ենթակետն ուժը կորցրել է 15.04.22 N 509-Ն)***

4) վարկառուի հաշվի համարը.

5) վերադարձվող գումարի չափը.

6) տվյալ հաշվետու եռամսյակի համար վերադարձվող գումարի վերաբերյալ կազմված եզրակացության համարը.

7) գանձապետարանի տարանցիկ հաշվի համարը, որից պետք է վերադարձվի գումարը։

(11-րդ կետը փոփ. 08.06.18 N 647-Ն, 24.09.21 N 1578-Ն, լրաց., փոփ. 15.04.22 N 509-Ն)

12. Հանձնարարականը ներկայացվելու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում վերադարձվող գումարը փոխանցվում է վարկառուի բանկային հաշվին։

(12-րդ կետը փոփ. 08.06.18 N 647-Ն, լրաց. 24.09.21 N 1578-Ն, փոփ. 15.04.22 N 509-Ն)

13. Վարկառու ֆիզիկական անձանց որևէ հիմքով հաշվետու եռամսյակի համար ավել վերադարձված գումարների Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերադարձն իրականացվում է հաջորդ հաշվետու եռամսյակի և (կամ) նախորդ հաշվետու եռամսյակի (եռամսյակների) համար եկամտային հարկի վերադարձի դիմում ներկայացված չլինելու դեպքում՝ նաև այդ եռամսյակի (եռամսյակների) վերադարձման ենթակա եկամտային հարկի գումարներից՝ դրա մասին տվյալ ֆիզիկական անձանց ծանուցելու և նրանց համաձայնությունն ստանալու միջոցով։ Ծանուցելուց հետո եռամսյա ժամկետում սույն կետում նշված համաձայնության կամ վերադարձման ենթակա եկամտային հարկի գումարների բացակայության կամ գումարների ոչ ամբողջությամբ վերադարձման դեպքերում հարկային մարմինն իրականացնում է պարտավորությունների կատարման վերաբերյալ ծանուցում, և սույն կետում նշված վարկառու ֆիզիկական անձինք ավել վերադարձված գումարները ծանուցմամբ նշված ժամկետում վճարում են համապատասխան գանձապետական հաշվին։ Ծանուցմամբ նշված ժամկետում չվճարելու դեպքում դրանց

գանձումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

(13-րդ կետը լրաց. 24.09.21 N 1578-Ն, խմբ. 20.06.24 N 955-Ն)

14. Վարկառու ֆիզիկական անձանց հաշվետու եռամսյակի համար վերադարձման ենթակա եկամտային հարկի գումարից որևէ հիմքով պակաս վերադարձված գումարների վերադարձն իրականացվում է վարկառուի կողմից հարկային մարմին եկամտային հարկի վերադարձի մասին նոր դիմում ներկայացվելու դեպքում:

(14-րդ կետը լրաց. 24.09.21 N 1578-Ն)

15. Վերադարձված գումարը բանկի կողմից մերժվելու դեպքում բանկի կողմից փոխանցվում է գանձապետարանի տարանցիկ հաշվին՝ նշելով մերժման հիմքը, որի մասին հարկային մարմինը ծանուցում է վարկառուին: Վարկառու ֆիզիկական անձը համապատասխան տվյալները ճշտելուց հետո ներկայացնում է եկամտային հարկի վերադարձի մասին նոր դիմում, որի հիման վրա կատարվում է գումարի վերադարձ վարկառուի բանկային հաշվին՝ գանձապետարանի տարանցիկ հաշվից:

(15-րդ կետը լրաց. 24.09.21 N 1578-Ն)

(հավելվածը լրաց., խմբ., փոփ. 08.06.18 N 647-Ն, 24.09.21 N 1578-Ն, փոփ., լրաց. 15.04.22 N 509-Ն, փոփ., խմբ., լրաց. 20.06.24 N 955-Ն, 17.10.24 N 1626-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Վ. Ստեփանյան**

Փոփոխման պատմություն

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան
17.10.2024, N 1626-Ն	05.10.2017, N 1321-Ն
20.06.2024, N 955-Ն	05.10.2017, N 1321-Ն
15.04.2022, N 509-Ն	05.10.2017, N 1321-Ն
24.09.2021, N 1578-Ն	05.10.2017, N 1321-Ն
08.06.2018, N 647-Ն	05.10.2017, N 1321-Ն

Փոփոխված ակտ

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան